


# ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ՆՎԻՐՎԱԾ ԿԻՆՈԲԵՄԱԴՐԻՉ ԱՐԿԱԴԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ 95-ԱՄՅԱԿԻՆ

*Posted on August 3, 2023 by Keghart*



Category: [Opinions](#)



## Նառա Դանիելյան, Երևան, 29 հուլիս 2023

Տարին հոբելյանական է հայկական կինոյի համար. տոնում ենք [հիմնադրման 100-ամյակը](#): Այս համաժիրում օրերս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում բացվեց կինոբեմադրիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արկադի Հայրապետյանի ծննդյան 95-ամյակին նվիրված ժամանակավոր ցուցադրություն: Ներկայացված են նրա կյանքն ու գործունեությունն արտացոլող արժեքավոր վավերագրեր. լուսանկարներ, բեմագիրներ (սցենարներ), նամակներ, ազդագրեր և արխիվային այլ նյութեր: Ազգային կինոյի 100-ամյակի տարում Գրականության և արվեստի թանգարանը հատկապես կարևորում է կինոյի նվիրյալների վերարժևորումը:



Ցուցա

դրության բացմանը հաջորդած հուշ-ցերեկույթի բացման իր խոսքում Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանը մասնավորապես նշեց. «Այս տարի լրանում է թե՛ հայ կինոյի 100-ամյակը և թե՛ Արկադի Հայրապետյանի 95-ամյակը, նրանք գրեթե հասակակիցներ են: Ժամանակակիցները նրա մասին միշտ խոսում են սիրով, խոսում են նրա մարդկային հմայքի մասին: Պատմում են, որ նա շատ կենսակից, ուրախ մարդ է եղել. ՄԱՐԴ-ՏՈՆ, այսպես են բնութագրում նրան ընկերները»:

Վերջերս թանգարանի կինոարխիվը համարվել է սոր նվիրատվություններով: Արկադի Հայրապետյանի արխիվը ստեղծվել էր նրա կնոջ՝ դերասանուհի Տանյա Շահինյանի նվիրատվությամբ, այժմ այն հարստացավ կինոբեմադրիչի դստեր՝ դաշնակահարուհի Անահիտ Հայրապետյանի նվիրած արժեքավոր նմուշներով, այդ թվում նաև Սերգեյ Արուտչյանի՝ բեմադրիչին մակագրված ստեղծագործությամբ:

«Սարոյան եղբայրներ», «Արևիկ», «Ժայռը», «Շեկ ինքնաթիռ», «Գործուղում առողջարան». հայ կինոյի լավագույն ու ամենասիրված ֆիլմերում նրա անունն առաջինն էր հեղինակային կազմում: Վերոնշյալ ֆիլմերն արժանացել են հեղինակավոր մրցանակների:



Հայրապետյանը ոչ միայն տաղանդավոր բեմադրիչ էր, այլ նաև հրաշալի կազմակերպիչ. «Կազմակերպչական գործում կինոյի հենասյուներից է համարվում: Արկադի Հայրապետյանը խոստովանում է, որ կինոն իր մեծ սերն է, նա կինոյով ապրող մարդ էր, սիրով ու մեծ նվիրումով է կատարել ամեն մի գործ, նրա յուրաքանչյուր նախաձեռնություն միշտ հաջողել է», - իր խոսքն ամփոփեց թանգարանի կինոարվեստի բաժնի վարիչ Արփինե Ասլանյանը:

«Հայ կինոյի 70-ական թվականների ազդեցիկ դեմքերից էր Արկադի Հայրապետյանը, և հիշվող ֆիլմեր է բեմադրել, որոնք մեծ ոգևորությամբ ընդունել են թե՛ հանրությունը և թե՛ մասնագետները», - իր խոսքում նշեց կինոգետ, պրոֆեսոր Անետա Երզնկյանը:

Հուշ-ցերեկույթին ելույթ ունեցան նաև բեմադրիչ Հրանտ Հակոբյանը, կինոգետներ Պավել Ջհանգիրովը, Ռոբերտ Մաթոսյանը, Արկադի Հայրապետյանի դուստրը Անահիտ Հայրապետյանը, անվանի այլ մտավորականներ:

Արկադի Հայրապետյանի 95-ամյակին սվիրված հուշ-ցերեկույթն անցավ ջերմ հիշողություններով, հուզմունքով և ծիծաղով:



### **Հայրապետյանի դուստրը ձախին՝ միջոցառման ժամանակ**

«Եթե նորից ընտրություն անեի, էլի կինոբեմադրիչի մասնագիտությունը կընտրեի», – կինոյով ապրող, կինոն իր անբաժանելի մասը համարող ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արկադի Հայրապետյանի խոսքերն են:

Արկադի Հայրապետյանը ծնվել է 1928 թվականի հունիսի 4-ին, Բարսիլում: Քսաներեք տարեկան էր, երբ տեղափոխվեց Երևան և ընդունվեց Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական բաժին: Աշխատել է Մայր

թատրոնում (այժմ Գաբրիել Սուևոուկյանի անվան Ազգային ակադեմիական թատրոն),  
հետո՝ «Հայֆիլմ» կինոհիմնարկությունում (կինոստուդիա): Կինոյի մեծ ճանապարհը  
սկսել է բեմադրիչի օգնականից, կարճ ժամանակ անց դարձել բեմադրիչ և նկարահանել  
ֆիլմեր, որոնք մինչև հիմա հեռուստաէկրանին են: Մահացել է 1993 թվականի մարտի  
31-ին, Երևանում:

Ազգային կինոյի 100-ամյակի առթիվ Գրականության և արվեստի թանգարանը  
շարունակում է հոբեյանական միջոցառումների շարքը. մեկնարկել է նոր նախագիծ՝  
հայ կինոյին նվիրված դասախոսություն-հանդիպումների շարք, որը կշարունակվի  
մինչև տարեվերջ:

**There are no comments yet.**